Naira Zohrabyan, de la faction d'opposition Arménie prospère, a appelé les femmes leaders européennes, les militantes des droits humains et toutes les organisations s'occupant des problèmes des femmes à forcer l'Azerbaïdjan à renvoyer Maral et tous les prisonniers de guerre.

«J'ai appelé toutes les femmes de l'Assemblée parlementaire du Conseil de l'Europe à appeler l'Azerbaïdjan et l'épouse d'Aliyev, ambassadrice de bonne volonté de l'UNESCO, à renvoyer immédiatement Maral Najaryan, une civile, en Arménie», a déclaré Naira Zohrabyan dans un message sur Facebook.

«J'ai lancé un appel à l'UNESCO, qui donne le titre d'ambassadeur de bonne volonté à l'épouse du président d'un pays criminel de guerre, afin que l'UNESCO exige dans le cadre de son mandat que son ambassadeur de bonne volonté azerbaïdjanais ne crache pas sur le droit international humanitaire et garde les prisonniers arméniens de guerre et Maral Najaryan en tant que «monnaie politique», pour renvoyer immédiatement tous les prisonniers de guerre en Arménie en vertu de la 3e Convention de Genève», a déclaré Naira Zohrabyan.

*(Armenews)*

# Une délégation technologique iranienne vise à promouvoir les produits en Arménie

TEHERAN—Une délégation composée de représentants de 40 entreprises iraniennes basées sur le savoir sera en Arménie dans le but de promouvoir leurs produits technologiques et d'étendre le marché dans le pays voisin, rapporte le Tehran Times.

Organisée par la vice-présidence pour la science et la technologie, la visite de quatre jours se tiendra du 16 au 19 février.

Le 27 janvier, la vice-présidente pour la science et la technologie, Sourena Sattari, a rencontré le ministre arménien de l'Économie Vahan Kerobyan à Téhéran pour discuter des moyens d'élargir la coopération technologique.

Saluant les réalisations scientifiques et technologiques de l'Iran, Kerobyan a déclaré: «Nous sommes d'accord avec la mise en œuvre d'un projet dans le domaine de la création d'un parc technologique commun entre l'Iran et l'Arménie dès que possible et la formation d'une équipe pour développer la coopération bilatérale.»

Sattari, a déclaré pour sa part, que l'Iran compte quatre millions d'étudiants avec une grande capacité de connaissances, de sorte que le pays compte sur eux pour évoluer vers une économie basée sur la connaissance.

Il y a actuellement 6 000 entreprises basées sur le savoir en Iran, et l'année dernière, elles ont généré un chiffre d'affaires d'environ 12 milliards de dollars, a-t-il souligné.

Il a souligné que l'Iran possède les plus grandes startups de la région dans le domaine des technologies de l'information et de la communication, de la biotechnologie, de la nanotechnologie, des cellules souches, etc., et qu'environ 50 parcs technologiques ont été créés dans tout l'Iran.

Notant que 98% des médicaments nécessaires dans le pays sont produits dans le pays, il a déclaré qu'un grand nombre de scientifiques et d'universitaires arméniens étudient dans les universités iraniennes.

Il a souligné la nécessité d'élargir la coopération dans le domaine des parcs technologiques communs et des échanges d'étudiants.

*(Armenews)*

# L'Arménie perd des plumes dans un classement mondial de la démocratie

EREVAN—L'Economist Intelligence Unit (EIU), un groupe de réflexion basé à Londres, a revu à la baisse la position de l'Arménie dans son enquête annuelle sur l'état de la démocratie dans le monde.

L'Arménie est passée de la 86e à la 89e place dans le dernier indice de l'EIU, après avoir considérablement progressé dans le classement mondial au cours des deux années précédentes.

L'EIU évalue 167 pays et territoires sur cinq indicateurs, y compris les libertés civiles, le processus électoral et le pluralisme, et les divise en quatre catégories : les démocraties «pleines» et «imparfaites», les «régimes hybrides» et les «régimes autoritaires».

L'Arménie reste dans la catégorie des pays «à régime hybride» avec un «score» global de démocratie de 5,35 sur 10. L'EIU lui avait attribué 5,54 points dans l'Indice de la démocratie 2019, publié il y a un an.

«Le score de l'Arménie a considérablement baissé en 2020, après que le pays a résisté à la tendance régionale et enregistré une amélioration significative en 2018-2019», peut-on lire dans le dernier rapport de l'EIU.

«À la suite du conflit armé avec l'Azerbaïdjan au sujet de la région séparatiste du Haut-Karabagh, le gouvernement arménien a imposé la loi martiale qui a considérablement limité les libertés des citoyens, y compris la liberté d'expression. La loi martiale s'est poursuivie même après la fin des combats via un cessez-le-feu et a été utilisée comme prétexte pour disperser les manifestations anti-gouvernementales et détenir les dirigeants de l'opposition», pense l'organisme.

Les groupes d'opposition arméniens ont accusé le gouvernement d'exploiter l'état d'urgence et la loi martiale qui en a résulté pour réprimer la dissidence.

Ils l'ont également dénoncé pour avoir promulgué en juin 2020 des amendements constitutionnels qui ont considérablement modifié la composition de la Cour constitutionnelle du pays. Le tribunal a été bloqué.

*(Armenews)*

# Des prêts pour des hôpitaux

EREVAN—La Banque mondiale a approuvé le prêt de 7,4 millions de dollars destinés à aider le gouvernement arménien à construire et à équiper deux nouveaux hôpitaux provinciaux.

Dans un communiqué publié jeudi soir, la banque a déclaré qu'elle servirait de «financement supplémentaire» à un projet de santé lancé en Arménie en 2013. Elle avait alors prêté 35 millions de dollars à l'ancien gouvernement du pays.

Le communiqué indique que le projet élargi comblera les «déficits financiers» pour la construction des hôpitaux qui seront situés dans les provinces de Gegharkunik et Vayots Dzor.

Il a cité le chef du bureau de la Banque mondiale à Erevan, Sylvie Bossoutrot, disant que plus de 137 000 résidents locaux auront accès à des «soins médicaux de qualité» grâce au projet. La banque a déjà financé la construction de 18 centres médicaux régionaux en Arménie, a précisé Bossoutrot.

Le communiqué ajoute que le financement supplémentaire augmentera également la capacité du pays à faire face à la pandémie de coronavirus.

«En raison des limitations de la capacité hospitalière pendant la pandémie pour la gestion clinique des cas de COVID-19 dans la région de Vayots Dzor, les cas nécessitant des soins intensifs ont été transférés vers les hôpitaux des régions environnantes, entraînant des retards dans l'accès aux services et augmentant le risque de mortalité», a-t-il expliqué.

*(RFE/RL)*

## *ԸՆԿԵՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ*

# Մեծ մարտահրաւէրը՝ ի՞մս, թէ՞ մե՛րը

*Առաջին անգամն էր, Հայաստան գացեր էի։ Կրնամ ըսել ուխտագնացութեա՛ն էի գացեր։ 1991 սեպտեմբերի վերջն էր, անկախութեան հանրաքուէէն քանի մը օր ետք։ Խորհրդային Միութիւնը տակաւին պաշտօնապէս չէր լուծարուած. Այդ պիտի կատարուէր երեք ամիսէն։*

*Շատ բան տեսնելու, շատերո՛ւ հանդիպելու ցանկութիւն ունէի։ Եւ բախտաւոր եղայ, քանի որ նախագահական առաջին ընտրութեան ընտրարշաւի օրերն էին, եւ այդ ծիրին մէջ ալ զանազան ընկերներու հետ ամբողջ երկիրը շրջելու առիթ ունեցայ երկու շաբթուան ընթացքին, միաժամանակ նաեւ չպակսեցան բազմաթիւ անձերու հետ դէմ-յանդիման նստելու, զրուցելու, հարցազրոյցներ ալ ունենալու առիթներ։*

*Անձերէն մէկը, որ մտադրած էի տեսնել, Կապուտիկեան Սիլվան էր, այն բանաստեղծուհին, որուն «Խօսք իմ որդուն»-ը մեզի հասած էր դպրոցական օրերուս, որուն առաջին անգամ հանդիպեր էի 1963-ին՝ Գահիրէ, եւ երկրորդ անգամ 1973-ին՝ Մոնթրէալ։ Անկէ ի վեր տարօրինակ կապ մը պահուած էր մեր միջեւ, իրմէ կը ստանայի իր գիրքերը, մակագրուա՛ծ, սակայն ոչ մէկ նամակ։*

*Եւ ահա, կը յաջողիմ ձեռք ձգել հեռաձայնի թիւն ու տան հասցէն, եւ երեկոյ մը կը թակեմ իր դուռը։ Կը մտնեմ շքեղ յարկաբաժին մը՝ հին-դասական ոճով զարդարուն կահաւորումով, գեղորներով, գորգերով ու պատերուն՝ գեղեցիկ բնանկարներով ու այլ կտաւներով հարուստ։ Ջերմ մթնոլորտ մը, նաեւ շատ ջերմ ու անկեղծ հանդիպում մը։ Այդ հանդիպման մասին այլապէս գրած եմ ու այդ մասին չէ, որ կ'ուզեմ խօսիլ այստեղ։*

*Կ'ուզեմ պարզապէս մատնանշել այդ շքեղութեան ամբողջովին հակադիր այն պատկերը, որ իր բնակած բազմայարկ շէնքը կը ներկայացնէր։ Ոչ միայն իր, այլ շատերո՛ւ։ Սկսելով շէնքի մուտքի դռնէն կամ դարպասէն, որ կրնար խարխլած ըլլալ, իր ծխնիներուն վրայ դժուարութեամբ շարժող, մուտքի գաւիթէն՝ մութ, կեղտոտ, աստիճանավանդակէն՝ նոյնպէս, յաճախակի կոտրուած աստիճաններով, չաշխատող վերելակով եւ այլն։ Ուղղակի կը ցնցուէիր, եւ եթէ մտած ատենդ այդ իրավիճակը զարմանք ու նողկանք կը պատճառէր, մտածելով, թէ ինչպիսի՞ պայմաններու մէջ կը բնակէր անուանի բանաստեղծուհին՝ «ամենա՛յն հայոց բանաստեղծուհին», դուրս եկած ատենդ տարբե՛ր մտորումներ կը տագնապեցնէին միտքդ, թէ ինչպէ՞ս ինք ու այդ շէնքի միւս բնակիչները կը հանդուրժէին նման պայմաններու մէջ տեսնել իրենց բնակած շէնքը, ուր սակայն ինք ու հաւանաբար իւրաքանչիւր բնակիչ ջանք չէին խնայեր, ի հարկէ իրենց կարողութեան սահմաններուն մէջ, ընդունելի, ընդունելիէն ալ շատ աւելի հանգիստ ու հաճելի միջավայր մը ստեղծելու համար իրենց սեփական յարկաբաժիններուն մէջ։*

*Ի՞նչ էր ասոր պատճառը. Ինչպէ՞ս բացատրել այս աչք ծակող հակասութիւնը։*

*Պարզ իրողութեամբ մը. շէնքը պետութեան կը պատկանէր (մինչեւ այդ օրերը)։ Ինծի չէր պատկաներ, ինչո՞ւ ես պիտի մտահոգուէի անոր խնամքով, հոգ տանէի, նորոգէի անոր կոտրուած աստիճանները, որոնք անկասկած կրնային արկածներու պատճառ դառնալ, նոյնիսկ փոխէի այրած լապտերը, նախընտրելով մութին մէջ խարխափելով բարձրանալ յարկաբաժինս։ Տակաւին համատիրոյթի* (condominium) *գաղափարը չէր ներածուած ի Հայաստան...*

*Այս պարզ օրինակով կրնայիր տեսնել այն ահաւոր հոգեբանական վիճակը, որ ստեղծուած էր մեր հայրենիքին մէջ, եւ ոչ միայն մեր հայրենիքին՝ եօթ տասնամեակի ընթացքին, վարչակարգի մը տակ, որ եկած էր որպէս թէ նախորդ դարերու անարդար կարգերը փոխելու եւ երջանիկ կեանք մը շնորհելու պատրանքային խոստումը տալով մարդուն։ Եւ չարաչար սխալելով։*

*Այդ մասին վկայութիւն մըն ալ մէջբերելէ առաջ, սակայն, կ'ուզեմ վերյիշել երկու այլ դրուագներ եւս, բարացուցակա՛ն դրուագներ։*

*Վերանկախացումէն տասը տարի առաջ էր,* 1981 *թուականի ամառը։ Մոնթրէալի «Էքսփօ 67» միջազգային մեծ ցուցահանդէսի շարունակութիւնը հանդիսացող ու նոյն հողատարածքին վրայ, տակաւին կանգուն մնացած շէնքերով շարունակուող «Մարդը եւ իր աշխարհը» ցուցահանդէսի ծիրին մէջ, նախկին խորհրդային տաղաւարին մէջ կը կայանար Խորհրդային Միութեան կողմէ նախաձեռնուած ցուցադրութիւն՝ մեծ մասամբ Խորհրդային Հայաստանի եւ անոր յարակից՝ փոքր մասով ալ Եակուտներուն նուիրուած։ Ամբողջ երեք ամիս։ Յաճախ հոն պիտի գտնուէի, ծանօթանայի տասը-տասներկու պաշտօնատար մեր հայրենակիցներուն, որոնք կը վարէին ցուցահանդէսը եւ այցելուները կը դիմաւորէին, կը զբաղեցնէին այնտեղ։ Պիտի մտերմանայի անոնցմէ շատերու հետ, զիրենք պիտի հիւրընկալէի մեր տունը։*

*Անոնցմէ մէկը՝ Ռոպերտ Սարգսեան անունով խելացի ու հաճելի անձնաւորութիւն մը, որ ամենէն աշխուժ անձերէն մէկն էր, որ յետոյ, մեկնած օրը միայն, իրմէ պիտի նաեւ տեղեկանայի թէ խումբին կուսակցական-«գաղափարական» (անշեղութեան) պատասխանատուն էր, որ նոյնիսկ պիտի գար տեսնուելու մեր պատասխանատու մարմիններուն հետ, ու դժգոհէր, թէ աւելի ուժեղ կեցուածք չէինք ցուցաբերած, երբ այդ ցուցահանդէսի պաշտօնական հանդիսութիւններու կամ ընդունելութիւններու ընթացքին Դաշնակցութեան դէմ խանգարիչ արգելքներ դրուած էին։ Ուրեմն մեր ընտանեկան սեղանին շուրջ ընթրիքէն ետք, Ռոպերտին հետ դուրս եկանք քիչ մը ճեմելու համար մեր թաղին ու անոր կեդրոնական զբօսայգիին մէջ, որ գեղեցկօրէն կը լուսաւորուէր մութը կոխելէ ետք։*

*— Ի՛նչ լաւ կ'ըլլար ես ալ այստեղ տուն մը ունենայի,— բաղձանք յայտնեց քայլակիցս։*

*Ականջիս չէի հաւատար։ Ինք, որ եկած էր Հայաստանի եւ իր մշակոյթին եւ արտադրութիւններուն գովքը ընելու Մոնթրէալի հասարակութեան ու հայութեան, արտագաղթելու խօսք կ'ընէր։ Կարծես նոյն հակասութիւնն էր, որ յետոյ, տասնամեակ մը ետք պիտի տեսնէի Կապուտիկեանի յարկաբաժնին ու իր շէնքի մուտքի գաւիթին ու աստիճանավանդակին միջեւ։*

*Սակայն չեմ ուզեր որ չտեսնենք յուշադրամին միւս երեսն ալ։*

*Նոյն այդ ցուցահանդէսին մասնակցողներէն մէկն ալ Սահակ Սահակեան անուն ինքնուս արուեստագէտ մըն էր, ոչ՝ անուանի երգիչը, որ կը նստէր ու փայտէ պուպրիկներ կը ներկէր-կը գունաւորէր ու կը հրամցնէր այցելուներուս։ Երբոր խօսէիր հետը, ու հասկնար որ հայ ես, մանաւանդ եթէ ելեկտրական հոսանք մը անցնէր մեր միջեւ, պուպրիկին վրայ կ'երեւէին երեք գոյներ, մեր Եռագոյնի գոյները։ Զինք ալ, ի հարկէ, պիտի հրաւիրէինք մեր տունը ընթրիքի մը։ Եւ ան հոն պիտի խոստովանէր, թէ ինք երկիրը ձգող չէր, իր ոտքերը շատ խորն էին մխրճուած մեր հողին մէջ, եւ ցոյց ալ պիտի տար իր գոյնզգոյն շապիկին կոճակներէն մէկէն կախուած երեք գոյն թելեր...։ Այո, այսպիսի մարդիկ ալ կային ու կա՛ն։ Անոնցմէ շատեր կը հանգչին Եռաբլուրի ու Ստեփանակերտի շիրմավայրերու տարածքին...*

*Ուրեմն ահա նաեւ վկայութիւն մը, որ այնքան խօսուն է։*

*Թուականը՝* 1989*։ Երկրաշարժ, Սումգայիթ. պատմական ժամանակներ։ Հրանտ Մաթեւոսեան Մոնթրէալ կ'այցելէ։ «Հորիզոն» խմբական հարցազրոյց մը կ'ունենայ հետը։ Եւ ահա թէ ի՛նչ կ'ըսէ գրողը. «Երկրի, խորհրդային ասուած երկրի գլխաւոր հարցերն են. մարդու դիմազրկութեան եւ մարդու իր հողից, իր աշխատանքից գժտութեան, մարդու եւ աշխատանքի բախման հարցերը. գժտութիւն՝ որ դարձաւ երկրի անհուն աղքատութեան պատճառ։ Յաւակնոտ երկրի յեղափոխականները, ովքեր որ յաջողեցին իրենց յեղափոխութիւնը եւ կարծում էին որ իրենք աստուածներ էին, կարողանալու են երկրի վրայ նոր խորհրդանիշեր ստեղծել, նոր այբուբեն ստեղծել եւ մարդուն նոր կոչումներ տալ, աւելիով՝ նոր երկիր ստեղծել, ոչինչի չհասան իրենց* 70 *տարուայ աշխատանքով, միայն հասան էն բանին, որ ամբողջ խորհրդային երկրով մէկ խորհրդային մարդը թշնամացաւ իր երկրին, հողին, աշխատանքին, իր գործին նկատմամբ» («Հորիզոն»,* 21 *օգոստոս* 1989, Հաղորդութիւն Հրանտ Մաթեւոսեանի հետ)։ *«Յաւակնոտ երկրի յեղափոխականները»... հոն չե՞ն այսօր ալ։*

*Այս մտորումները կ'արձանագրեմ ՀՅԴ* 130*-ամեակին առթիւ։ Կ'ենթադրեմ, որ վերեւի տրուած օրինակներէն ու վկայութենէն անդին շատ բան ըսելու կարիքը չկայ տեսնելու համար մեր առջեւ նետուած ձեռնոցը։*

*Այո՛, մենք պարտաւոր ենք իր հողին տիրութեան զգացումը վերարծարծել, ամրակայել մեր ժողովուրդին մէջ, այդ տիրութեան մէջ հողին հետ հասկնալով այն ամէնը որ մաս կը կազմէ հաւաքական սեփականութեան, ժառանգութեա՛ն, եւ բոլոր «եսերէն» անդին «մե՛նքը» զօրացնել մեր հոգիներուն մէջ։ Բան մը, որ անցնող երեսուն տարիներուն չկրցանք համապարփակ կերպով կատարել։ Վերցնել այդ «գժտութեան», այդ անտարբերութեան, օտարո՛ւմի զգացումը՝ հայրենիքի մէջ թէ հայրենիքէն դուրս։*

*Ահա մեր մարտահրաւէրը, որ պէտք է ընդունինք, մանաւանդ այսօր՝ պարտուած ազգի մը մեր իրավիճակին մէջ, որպէսզի կարենանք շարունակել մեր գոյամարտը։*

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

Թափանցում... Սկիզբը էջ 5

*վար մարմիններէն, անկախ անկէ թէ արդա՞ր էին իրենց դժգոհութիւնները, թէ անարդար։*

*Հիմա, այս օրերուն, երբ մեր երկրի պետականութիւնը արեւին տակ դրուած կարագի նման կը հալի մեր բոլորին աչքերուն դիմաց, Դաշնակցութիւնը լծուած է այդ պետականութիւնը փրկելու ծանր գործին։ Այսօր, ոչ միայն մեր երկրին դարպասները բացուած են համաթուրանականութեան դիմաց, այլեւ լուրջ մտավախութիւններ կան, որ ՀՀ ներկայ իշխանութիւնները տակաւին չեն ամբողջացուցած իրենց այն սեւ գործը, որուն հլու հնազանդ կամակատարները դարձած են. այսինքն՝ անհաւանական չէ, որ Թուրքիոյ հետ «բարի-դրացիական» յարաբերութիւններ հաստատելու կեղծ օրակարգով, փաշինեան ստորագրէ այնպիսի փաստաթուղթ մը, որ ոչ միայն նուիրականացնէ Հայաստան-Թուրքիա ներկայիս սահմանները, այլեւ Հայաստանը հրաժարի Ցեղասպանութեան ճանաչման եւ հատուցման ամէն ճիգէ։ Մէկ խօսքով՝ Հայաստանի ու հայ ազգի դամբանականը։*

*Բնականաբար Դաշնակցութիւնն է, որ ամէնէն ուժեղ թափով պիտի պայքարի ասոր դէմ ու դիմադրէ։ Դաշնակցութեան կողքին, այս աշխատանքին լծուած են նաեւ բազմաթիւ ուժեր։ Սակայն փաստօրէն, այս դիմադրական ճակատին հիմնական առանցքը (կամ առանցքներէն մէկը) Դաշնակցութիւնն է։ Հետեւաբար, պէտք է շարունակել զայն տկարացնելու միտող քայլերը, ըլլան ատոնք քարոզչութեամբ, թէ մասնայատուկ քայլերով, ուր որ կարելի է, այս կամ այն շղարշին տակ (ինչպէս օրինակ՝ «մտահոգ» երեւալով)։ Այս է ներկայիս ստեղծուած իրականութիւնը։*

### *ԻԲՐԵՒ ՎԵՐՋԱԲԱՆ՝ ՄԵՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ*

*Մեր յօդուածի առաջին մասով անդրադարձեր էինք Դաշնակցութեան մէջ ներքին տարակարծութիւններու թեմային ։*

*Դաշնակցութիւնը ապրող օրգանիզմ է։ Կը գործէ կեանքին ու իրականութիւններուն հետ համահունչ։ Երբեմն նաեւ «հարբուխէ» կը վարակուի, կը «հիւանդանայ», բայց շնորհիւ իր ժողովական փորձուած դրութեան, կը յաջողի «դարմանելու» ինքզինք։*

*Բայց ինչպէ՞ս.- Մեր հաշուետու ժողովները ընդհանրապէս եղած են բուռն. բոլոր տարակարծութիւնները կը բերուին սեղանին ու տեղի կ'ունենան շատ յաճախ բուռն վէճեր ու անխնայ քննադատութիւններ։ Գաղտնիք յայտնած չեմ ըլլար եթէ ըսեմ, թէ Դաշնակցական մարմիններու ամէնէն անխնայ քննադատողները նոյնինքն դաշնակցականներն են՝ իրենց համապատասխան ժողովներուն մէջ։ Ու ատոր համար ալ, լուծումները, դարմանումները կը բխին մեր ժողովներէն, այլ ոչ թէ անոնցմէ դուրս։ Եւ հո՛ս կը կայանայ մեր կենսունակութեան աղբիւրը։*

*Բայց մենք գիտենք իրարմէ զանազանել զազրախօսութիւնը եւ քնն-ա-դատ-ութիւնը (քննելով դատելը)։ Մենք գիտենք իսկական քննադատութեան եւ «թափանցողական» զազրախօսութեան տարբերութիւնը ու ասո՛ր համար է, որ մենք կը մնանք կենսունակ, բոլոր տեսակի դիմահար թէ անուղղակի յարձակումներու դիմաց։*

*Թող ոչ ոք կասկածի։*

ՎԱԶԷ ԲՐՈՒՏԵԱՆ

# ՈՒ՞Ր Է ԳԱՂՏՆԻՔԸ

*Ո՞ւր է գաղտնիքը ՀՅ Դաշնակցութեան կենսունակութեան։ Անոր յարաճուն վերելքին, տարածուն հմայքին եւ ծաւալուն ուժին։*

*Ինչպէ՞ս է, որ հայ ժողովուրդի քաղաքական այս մեծ կազմակերպութիւնը, հակառակ բոլոր աննպաստ պայմաններուն, կը շարունակէ առաջնորդի դեր կատարել սփիւռքի հայրենաբաղձ ու ազատատենչ հայութեան մէջ։*

*Շատ պարզ է այս հարցումներուն պատասխանը։*

*Դաշնակցութիւնը կ'ապրի, կը զարգանայ ու կը բարգաւաճի։ Իր շարքերը կը թարմանան ամէն օր նոր, երիտասարդ ուժերու յաւելումով։ Իր գաղափարականը հող կը գտնէ ժողովրդական լայն խաւերու մէջ, անոր համար որ ՀՅ Դաշնակցութիւնը՝ կեանքի կոչուած վերջ տալու համար հայութեան անլուր տառապանքին, եօթանասուն տարիէ ի վեր կանգնած է անոր կողքին, իբրեւ հարազատ արտայայտիչը անոր ազգային եւ քաղաքական պահանջներուն, իբրեւ տէրն ու պաշտպանը հայկական արդար դատին։ Դաշնակցութիւնը ո՛չ թէ խօսքի, այլ գործի կուսակցութիւն է եղած։*

*Վկայ՝ իր փառաւոր անցեալը, որ լի է հերոսական մարտնչումներու, դիւցազնական ոգորումներու սխրալի դրուագներով։*

*«Մարտիրոս», «Նահատակ», ջարդուելու դատապարտուած ժողովուրդ մը, շնորհիւ ՀՅ Դաշնակցութեան, դարձաւ անձնազոհ ֆետայիներու, հայդուկներու ծնունդ տուող փառապանծ ազգ մը։*

*Դաշնակցութիւնը իր դրօշին վրայ գրեց «Մա՛հ կամ ազատութիւն»՝ նպատակ ունենալով ազատ ու անկախ հայրենիք մը ապահովել հայ ժողովուրդին, իր պատմական հողերուն վրայ։*

*Հաւատարիմ մնաց իր հաւատոյ հանգանակին։ Մտքի ու բազուկի իր լաւագոյն հերոսները զոհ տուաւ ազատութեան ճանապարհին վրայ։*

*Ու ճակատագրական վայրկեանի մը, երբ կը կարծուէր, թէ Մեծ եղեռնը վերջապէս փորած է հայութեան գերեզմանը, Դաշնակցութիւնը յաջողեցաւ ի մի համախմբել ազգին բոլոր զաւակները եւ պատմական ճակատամարտներու շնորհիւ մեր դարաւոր թշնամիին պարտադրեց ազատ եւ անկախ Հայաստանը։*

*Հայ ժողովուրդը տեսաւ այս բոլորը։ Նահատեց դաշնակցականի զոհողութեան ոգին, անոր անշահախնդրութիւնը։ Ու փարեցաւ անոր՝ ամենայն վստահութեամբ։*

*Հասկցաւ, որ Դաշնակցութիւնը իր կողքին է միշտ, լաւ թէ գէշ օրերուն։*

*Երէկ երկրին մէջ իր հայդուկները լեռ կը բարձրանային պաշտպանելու համար հայուն պատիւը. այսօր սփիւռքի մէջ անիկա նուիրուած է ազգապահպանման սրբազան գործին։*

*Անկախութեան կորուստէն ետք, երբ բոլոր նահանջականներն ու սորկամիտները գլուխ կը ծռեն օտար բռնակալներու առջեւ եւ «սրտառուչ» համակերպութեամբ մը կ'ընդունին «կատարուած իրողութիւն»ը։ Երբ երկրի այսօրուան վարիչներն ու արտասահմանի անոնց մունետիկները վերջապէս լուծուած կը նկատեն Հայ դատը, ՀՅ Դաշնակցութիւնը կ'ընդվզի այս եպերելի մտայնութեան դէմ եւ քառասուն տարիէ ի վեր ի լուր աշխարհի կը յայտարարէ, թէ հայ ժողովուրդը Դատ ունի դեռ։ Այդ դատը կը լուծուի այն ատեն միայն, երբ հայը հայրենիքը կը դառնայ անկախ, ու երբ մեր բռնագրաւեալ հողերը կը վերադարձուին իրենց բուն տիրոջ։*

1890*-էն մինչեւ* 1959 *ամբողջ* 69 *տարուան փորձառութեան շրջան մըն է ապրած ՀՅ Դաշնակցութիւնը։ Հիմնուած այդ փորձառութեան վրայ՝ անիկա այսօր աւելի քան երբեք ուժով կը յայտարարէ, թէ ցնորք մը չէ իր ծրագիրը։*

*Ազգ մը, որ* 1918*-ի ամէնէն ողբերգական օրերուն յաջողեցաւ հրաշք մը գործել, կրնայ նոր հրաշք մը եւս գործել։*

*Աշխարհի ներկայ խառնակ վիճակին մէջ, երբ ընդհանուր դժգոհութիւն կը տիրէ երկրագունդիս մէկ ծայրէն միւսը, երբ ամէն ազգ իր դատի լուծումին կը սպասէ ակնդէտ, հայ ժողովուրդը չէ, որ ձեռնածալ պիտի ըլլայ՝ հրաժարելով իր արդար դատէն։*

*ՀՅ Դաշնակցութիւնը ինչպէս երէկ, այսօր ալ կը ներկայանայ իբրեւ ախոյեանը Հայ դատին։ Պիտի հետապնդէ զայն կարելի բոլոր միջոցներով, հաւատարմօրէն ու հաստատակամ, մինչեւ որ հայ ժողովուրդը տիրանայ իր ազատ, անկախ ու միացեալ հայրենիքին։*

*Ահա, թէ ո՛ւր է Դաշնակցութեան ուժին ու կենսունակութեան գաղտնիքը։*

ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԷԼ

Հրամայական... Սկիզբը էջ 8

*Չփոխուենք մեր էութեամբ եւ դաւանած գաղափարներով, բայց փոփոխուենք մեր գործելու մեթոտներով եւ նոր ժամանակին համահունչ ու քաղաքական միջավայրին համապատասխան թարմացնելով մեր աւանդականասելիքի մատուցման ձեւերն ու յստակեցնելով նորօրեայ առաջնահերթութիւնները։ Այսինքն կենսունակ լինելու համար բաւական չէ, որ դաւանես անանց գաղափարների, հարկ է, որ ասելիքդ ու անելիքդ համապատասխանեն օրուայ յուզող խնդիրներին եւ ունենաս դրանց լուծման բանալիներ։ Կարողանաս քո ժամանակի խնդիրներով ապրել եւ առաջ գնալ ժամանակին համաքայլ։ Աւանդական գաղափարներդ պէտք է ներդաշնակեցնես եւ ապրեցնես նոր իրականութիւնների մէջ։*

*Հայ մեծ բանաստեղծ Եղիշէ Չարենցը այսպիսի տողեր է գրել.*

«Թէ ուզում ես երգդ լսեն,
Ժամանակիդ շունչը դարձիր,
Կապուիր նեարդով իւրաքանչիւր
Քո աշխարհին քո նոր դարին»։

*Անցած դարի* 90*-ական թուականներին, երբ դեռ Հայաստանը նոր էր թօթափում խորհրդային ամբողջատիրութեան բեռը, Հայաստանում դեռեւս բիւրեղացած չէին հողային պահանջատիրութեան գաղափարները։ Խորհրդային հսկայ կայսրութիւնում, մինչ այդ, համարուել էր, թէ չկայ անարդարութիւն, կայսրութեան բոլոր ազգերը եղբայրներ են, հետեւաբար չէին կարող գոյութիւն ունենալ ազգային ու սոցիալական խնդիրներ եւ ուրեմն չէին կարող լինել նաեւ ազգային ու սոցիալական դժգոհութիւններ։*

*Այսօր, անշուշտ մտածողութեան հսկայական յեղաշրջում է տեղի ունեցել մեր երկրում եւ այդ գործում Դաշնակցութիւնը ունեցել է մեծ դերակատարութիւն։ Ընդունենք նաեւ, որ այսօր մեր հայրենիքում մեր կուսակցութիւնից դուրս կայ հայրենասէր ու պահանջատէր երիտասարդութիւն, որ պատրաստ է ինքնազոհաբերուելու հայրենիքի պաշտպանութեան համար, ինչպէս եւ պատրաստակամ է ներքաղաքական պայքարի համար։*

*Կարելի՞ է ասել, որ առանց մեզ էլ պայքարողներ կը գտնուեն եւ ուրեմն մօտեցել է ժամանակը յայտարարելու, թէ Դաշնակցութիւնն իսկապէս այլեւս անելիք չունի։ Ո՛չ, որովհետեւ Դաշնակցութեան մտածողութիւնն ու գաղափարական-քաղաքական դաւանանքը հիմնաւորուած են, համակարգուած են, հեռանկարային են եւ կուռ են ինչպէս ոչ մէկինը։ Դաշնակցութեան ծրագրային նպատակները արտայայտում են ողջ հայութեան ազգային եւ հասարակական-ընկերային իտէալները, Դաշնակցութիւնը ոչ միայն իր կառոյցով, այլեւ գաղափարախօսութեամբ միակ համահայկական ուժն է, որն արտայայտում է աշխարհատարած ողջ հայութեան հաւաքական շահերը՝ առանց դասակարգային կամ այլ խտրութեան։*

*Պատահական չէ, որ այսօրուան ճակատագրական օրերին Արցախի ու Հայաստանի իրաւունքների համար, երկրում ազգային ու բանիմաց իշխանութիւն հաստատելու նպատակով դարձեալ առաջին գծի վրայ կանգնած է Դաշնակցութիւնը։*

*Ինչպէս սակայն վերն ասուեց, մենք մշտապէս անհրաժեշտութիւնն ունենք թարմացնելու մեր ասելիքն ու գործելակերպը, եւ այս գործում ամէնէն ընկալելի օրինակն ու ամենաճկունը ի հարկէ երիտասարդ սերունդն է։*

*Այն մեթոտներով ու ճանապարհներով, որ մինչեւ Հայաստանի անկախ հանրապետութեան ստեղծումը Սփիւռքից հնարաւոր էր պայքարել Հայոց պահանջատիրութեան ուղղութեամբ, այսօր սահմանափակ են ու հնացած։ Միւս կողմից, փոխուած է հենց Թուրքիան, հազարաւոր հայեր որպէս զբօսաշրջիկներ ամէն տարի այցելում են իրենց պապենական բնակավայրեր, Արեւմտահայաստանում եւ Թուրքիայի այլ տարածքներում տեղի է ունենում հայութեան վերադարձ իրենց ազգային ակունքներին, վերջապէս ժամանակակից կապի միջոցները ընդլայնում եւ կարելիութիւններ են ստեղծում շփումների բոլորովին նոր ու լայն հնարաւորութիւնների համար։ Նոր իրողութիւնները մեզ պարտադրում են նորացնելու մեր մարտավարական զինանոցը։*

*Թռուցիկ անդրադառնամ մեր անելիքների միւս՝ սոցիալական երեսին։ Գրեթէ եօթ տասնամեակ հարկադրուած վտարանդիութեան մէջ գտնուելով, բնականաբար, Դաշնակցութեան օրակարգերում բացակայում կամ գրեթէ բացակայում էին սոցիալական խնդիրները, հասարակական լայն հնչեղութիւն ունեցող հարցերն ու, մասնաւորապէս, ընկերվարական մեր էութիւնից բխող գործնական ծրագրերը։ Հայաստանի եւ Արցախի անկախ պետականութիւնները Դաշնակցութեանը հնարաւորութիւն ընձեռեցին վերադառնալու այս խնդիրներին եւ ազգային առաջնահերթութիւնների կողքին դրանք դիտելու որպէս օրակարգային հիմնական հարցեր։ Ու թէեւ արդէն երեսուն տարի այս խնդիրները մեզ համար առօրեայ կուսակցական անելիք են, ակնյայտ է, շատ բան կայ անելու, շատ բաներ նորից պէտք է սկսել, եւ դեռ պիտի ձգտենք հայրենի պետականութեան պայմաններում հաստատելու մեզ, որպէս սոցիալիստական ուղղուածութեան առանցքային ուժի։*

*Դաշնակցութիւնը ամէն օր պէտք է աշխատանքներ տանի ոչ միայն Հայ դատի, Արցախի ու ազգային այլ խնդիրների ուղղութեամբ, այլեւ պայքարի հայրենաբնակ ժողովուրդի սոցիալական, իրաւական, քաղաքական, կրթական, առողջապահական, աշխատանքային եւ այլ իրաւունքների համար։*

*Կուսակցութեան բոլոր օղակների համար խնդիրներն ու անելիքները մէկ ամբողջութիւն են, միաժամանակ անբնական չէ, որ կուսակցութեան մաս կազմող հասարակական տարբեր շերտերն ու խաւերը առաւել ակտիւութիւն եւ նախանձախնդրութիւն դրսեւորեն սեփական կեանքի ու միջավայրի առաջնահերթութիւնների ուղղութեամբ։*

*Օրինակ, մեր երիտասարդութիւնը պէտք է զգայուն եւ պահանջատէր լինի մասնաւորապէս հայ երիտասարդութեանը վերաբերող հիմնահարցերում։ ՀՅԴ երիտասարդութիւնը պարտաւոր է այդպիսին լինել, այլապէս նա հասկանալի չի լինի իր միջավայրի համար, կ'անտեսուի եւ կը մղուի հանրային ու քաղաքական կեանքի լուսանցք։ Այլ խօսքով, նա ժամանակի մէջ կը կորցնի իր կենսունակութիւնը։ Դաշնակցական երիտասարդութիւնը, կուսակցական աւանդներին հաւատարիմ, պէտք է լինի համարձակ ու գործնական, գործի ու պայքարի նախաձեռնող, եւ չգնայ իրադարձութիւնների ետեւից։ Դաշնակցական երիտասարդութիւնը երիտասարդական-ուսանողական միջավայրերի համար օրինակ պէտք է լինի իր ազգային դիմագիծով, արժէքների ու նպատակների նկատմամբ հաւատարմութեամբ, այդ գաղափարները կարողանայ ներշնչել իր հասակակիցներին եւ նրանց տանել իր ետեւից՝ սեփական իրաւունքների պաշտպանութեան ասպարէզ։ Դաշնակցական երիտասարդութիւնը պէտք է լինի պահպանողական՝ ազգային-բարոյական արժէքների հարցում եւ յեղափոխականօրէն առաջամարտիկ՝ բացասական երեւոյթները յաղթահարելու, լաւագոյն նորը իւրացնելու, ազգային ու ընկերային ապագայի ուղենիշները նախանշելու եւ առաջընթացի ճամբան հարթելու գործում։*

*Միայն իրապէս գաղափարական, իրապէս գործօն, եւ իրապէս նպատակասլաց կուսակցական երիտասարդութիւնը կարող է լինել ժամանակակից ու պահանջուած, նոր աւիշ հաղորդել ողջ կուսակցութեան եւ ապահովել Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կենսունակութիւնը այն ապագայի մէջ, որ սկսւում է ամէն առաւօտ։*



Դաշնակցութիւնը Արցախի համար պայքարը սկսել է Սփիւռքում նախքան 88 թուականը՝ Արցախի հարցը դիտելով իբրեւ Հայ Դատի բաղկացուցիչ մաս։ Այդ պատճառով միանշանակօրէն պարզ է նրա վերաբերմունքը Արցախեան հարցին, եւ նա գիտէր իր անելիքը, յստակ էին առաջադրանքները, ունէր նպատակային բանաձեւումներ եւ նպատակին հասնելու եղանակներ։

Գրեթէ բոլոր գրիչները համամիտ են, որ Հ.Յ.Դաշնակցութեան դերակատարութիւնը իր ամբողջ փայլով ի յայտ եկաւ ազատագրական պայքարի առաջին շրջանում՝ 1988-1992, երբ անհրաժեշտ էր արթնացնել եւ գործի դնել հայութեանը իբրեւ մէկ համահաւաք ամբողջութիւն՝ մինչեւ ինքնապաշտպանութեան գործը պետական հիմքերի վրայ դնելը եւ կանոնաւոր բանակ ստեղծելը։ Դրանից յետոյ էլ եւ յատկապէս Արցախի պետականութեան ստեղծման ամբողջ ընթացքում ՀՅԴ դերակատարութիւնը եւս փոքր չէր, սակայն ազատագրական պայքարի գնացքը շարժման մէջ դնողը եղաւ Դաշնակցութիւնը։

Արդէն 1988-ի օգոստոսին Հ.Յ.Դաշնակցութեան 24-րդ Ընդհանուր ժողովը որոշում հանեց «Դէպի երկիր» կարգախօսով վերադառնալ Հայրենիք։ 24-րդ Ընդհանուր ժողովից յետոյ, ղեկավարուելով հայութեան գերագոյն շահերով, իր ռազմավարութեան ուղեգիծը փոխեց՝ ակնկալութիւն ունենալով հայութեան ապահովութեան եւ Հայաստանի անվտանգութեան խնդիրները։ Ազատագրական պայքարի ոգին եւ սկզբունքները անարատ պահած եւ Հայրենիքն ու Սփիւռքը իրար կապող կազմակերպութիւնը կարճ ժամանակաշրջանում հունաւորեց ժողովրդի տարերային շարժումները՝ ինքնապաշտպանութեանը հաղորդելով կազմակերպչական բնոյթ։

Դաշնակցութիւնը 1990 թուականին հաստատուեց ամբողջ Արցախում եւ սկսեց իր գործունէութիւնը՝ ազատագրական բացայայտ գաղափարների քարոզչութեան եւ ժողովրդին զինելու եւ ինքնապաշտպանութեան գաղտնիքներին ծանօթացնելու ջանքերով։

Դաշնակցութիւնն իր վրայ վերցրեց ազգային ինքնապաշտպանութեան եւ ազատագրական պայքարի ծանրութիւնն ու պատասխանատուութիւնը եւ ի զօրու եղաւ ստիպելու կամ հասկացնելու պետական իշխանութեանն ու ազգային մնացեալ կազմակերպութիւններին, որ այլ կերպ փրկութիւն եւ ազատութիւն չկայ. հողային ռազմավարական հարցերը լուծւում են իբրեւ օրէնք՝ արիւնալի բախումներով։ Պետութիւնը ստիպուած եղաւ գնալու այդ քայլին, իսկ մնացեալ կազմակերպութիւնների համար արդէն պատուի խնդիր դարձաւ Արցախում արիւն թափելը։ Ոմանք անփորձութեան պատճառով անխոհեմ քայլեր արեցին, սակայն կարեւորը դա չէ, այլ՝ այն փաստը, որ պատերազմը դարձաւ համազգային։ Ինչպէս որ պատերազմ են վարել ազգովին, այնպէս էլ հայրենակերտումը պիտի իրագործեն բոլոր ուժերով համատեղ։ Ազգային բոլոր կազմակերպութիւնները, ուժերը, պետութիւնը այս մեծ նպատակի իրագործման միջոցներ պէտք է լինեն եւ ոչ թէ ինքնանպատակ կամ այլանպատակ իրողութիւններ։

ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ



# Պիտի գայ պահը վերականգնելու Արցախի իրաւունքներն ու ամբողջական սահմանները

## «Դրօշակ»ի հարցազրոյցը ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր-Խաչատուրեանի հետ

ԴՐՕՇԱԿ.– 2020 թուականի սեպտեմբերի 27-ին Արցախի դէմ լայնամասշտապ յարձակումից ժամեր անց ՀՅԴ-ն յայտարարեց, որ կոչ է անում մէկ կողմ դնել ներքաղաքական տարակարծութիւնները եւ համազգային միասնութեամբ լծուել հայրենիքի պաշտպանութեան գործին։ Հէնց ժամեր անց էլ Դաշնակցութեան առաջին վաշտը ճանապարհուեց մարտադաշտ, իսկ որոշ ժամանակ անց վերջինիս միանալու էին կուսակցութեան միւս վաշտերը։ ՀՅԴ-ի ներգրաւուածութիւնը չսահմանափակուեց այս, առանց այն էլ ծանրակշիռ դերակատարութեամբ։ Ակտիւ աշխատանքներ են ձեռնարկուել զանազան բնոյթի օժանդակութիւնների կազմակերպման ու դրանց խրախուսման, զանգուածային միջոցառումների կազմակերպման, քաղաքական-դիւանագիտական եւ այլ ուղղութիւններով։ Մի փոքր ներկայացրէք նաեւ այս աշխատանքը։

*ՅՏԽ.– Պատերազմի բռնկումէն անմիջապէս ետք, ՀՅԴն, իր ուղեկից միութիւններով ու համակիրներով, ծաւալեց հայրենիքի օժանդակութեան լայն տարողութեամբ աշխատանք հետեւեալ չորս ուղղութիւններով՝*

*ա.– Մարդուժի տրամադրում. 2016ի ընդհարումներուն արդէն յայտնի էր դարձած կամաւորական ջոկատներու կազմակերպման անհրաժեշտութիւնը. ուստի, մենք նախաձեռնեցինք պահեստազօր ստեղծելու գործին, որպէսզի մարզուած մարդուժ տրամադրենք Հայոց բանակին երբ վտանգուին Հայաստանի ու Արցախի սահմանները։ Այդ նախաձեռնութիւնը ապա ստացաւ «Կամաւորական Շարժում» հասարակական կազմակերպութեան հանգամանք եւ ՀՀ պաշտպանութեան նախարարութեան գործակցութեամբ թափ առաւ աշխատանքը։*

*Սեպտեմբերի 27ին, Թուրք-ազրպէյճան-վարձկաններ հրոսախումբի յարձակումէն անմիջապէս ետք, մեր վաշտերու պատրաստուած տղաքը՝ տարբեր խումբերով, մեկնեցան Արցախի ռազմաճակատ եւ բոլորին վկայութեամբ՝այդ կամաւորները ունեցան պատուաբեր եւ խիստ կարեւոր ներդրում Արցախի սահմաններու պաշտպանութեան մէջ։ Տուինք բազմաթիւ զոհեր, որոնց յիշատակին առջեւ ակնածանքով կը խոնարհինք, եւ ունեցանք բազմաթիւ վիրաւորներ, որոնց բժշկական եւ ընկերատնտեսական կարիքները պարտինք կարգաւորել համակուսակցական ճիգով։ Հրադադարէն ետքն ալ մեր տղաքը լծուեցան Սիւնիքի պաշտպանութեան գործին։*

*Պահեստազօրի աշխատանքը կը շարունակուի այսօր ալ, որպէսզի միշտ ունենանք պատրաստ մարդուժ ի հարկին աջակցելու համար Հայոց բանակին, մանաւանդ այս վերակազմաւորման շրջանին ընթացքին։*

*բ.– Քաղաքական աշխատանք. Մեծ թափ առին մեր մարմիններու, Հայ Դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու ճամբով տարուող քաղաքական շփումները եւ իրազեկման արշաւը։ Արցախի ինքնորոշման իրաւունքի, անկախութեան ճանաչման արշաւը արձանագրեց լուրջ յառաջխաղացք մանաւանդ Եւրոպայի մէջ. աշխարհով մէկ բարձրացաւ բողոք՝ Թուրք-ատրպէյճան-վարձկաններ հրոսախումբի պատերազմական ոճիրներուն, ցեղապաշտական հայատեաց դրսեւորումներուն, փան-թրքական եւ նոր-Օսմանեան նկրտումներուն եւ միջազգային օրէնքներու ոտնահարումներուն դէմ. շարք մը երկիրներու մէջ նախաձեռնեցինք օրէնքներու կամ կառավարական որոշումներու նախագծեր կասեցնելու համար զինամթերքի հոսքը դէպի Ատրպէյճան. յատուկ յարաբերութիւններ մշակեցինք Մինսկի համանախագահող երկիրներու, ինչպէս նաեւ Իրանի եւ Եւրոպական միութեան՝ օրէնսդիր օղակի, գործադիր իշխանութեան եւ դեսպանութիւններու հետ. դատապարտեցինք Ատրպէյճանի եւ յատկապէս Թուրքիոյ դերը հայութեան դէմ սանձազերծուած հայատեաց ցեղապաշտական արշաւին եւ նոր-Օսմանեան ծրագիրներ առաջ քաշելնուն մէջ. եւ վերջապէս՝ միջազգային քաղաքական շրջանակներուն բացատրեցինք Թուրքիոյ հարաւային Կովկասէն ներս թափանցելու ճիգերը եւ Արցախեան բանակցութիւնները կասեցնելու կործանարար դերը։*

*գ.– Քարոզչական եւ ցուցական գործունէութիւն. Ատրպէյճան եւ Թուրքիա աշխարհով մէկ կազմակերպեցին քարոզչական ապատեղեկատուական գրոհ, արդարացնելու համար իրենց յարձակողապաշտ միտումները. պատերազմի ամբողջ տեւողութեան, եւ մինչեւ այսօր, կազմակերպուած սուտերով ողողեցին եւ կ՛ողողեն միջազգային մամուլը, հեռատեսիլը, ձայնասփիւռի ալիքները, կայքէջները եւ ընկերային ցանցերը ծաւալելով արհեստավարժ, համադրուած եւ մեծածախս քարոզչութիւն։ Այդ գրոհին հակադարձելու եւ հայկական տեսակէտները ներկայացնելու համար, մեր բոլոր հնարաւորութիւններով կազմակերպեցինք բազմաշերտ արշաւ։ Առաւել՝ շղթայազերծեցինք ցուցական արարքներ համաշխարհային մայրաքաղաքներու մէջ՝ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի դիւանագիտական ներկայացուցչութիւններու դիմաց։ Անհրաժեշտ էր մեր թշնամիներուն ցոյց տալ, թէ միակամ է աշխարհասփիւռ հայութիւնը եւ հաստատակամ՝ իր հայրենիքի պաշտպանութեան մտադրութեան մէջ բոլոր ճակատներու վրայ։ Եւ հայութիւնը կարողացաւ իսկապէս բռնցքուիլ՝ մէկդի դնելով բոլոր ներքին տարակարծութիւնները որպէսզի նպաստէ պատերազմին յաջող ելքին։*

*դ.– Հանգանակութիւններ. Համահայկական հանգանակութիւնները մեծ յաջողութեամբ ընթացան ու աւելի փոքր տարողութեամբ դրամահաւաքներ այսօր ալ կը շարունակուին։ Աշխարհասփիւռ հայութիւնը անմիջապէս արձագանգեց նիւթական ապահովելու Հայաստանի եւ Արցախի կոչին եւ տրամադրեց աւելի քան 170 միլիոն ԱՄՆ տոլարի գումար Հայաստան համահայկական հիմնադրամին։*

*Հանգանակութեան նպատակը հասնիլն էր Արցախեան պատերազմի հետեւանքով խնդիրներ դիմագրաւած զինուորականներու եւ կամաւոր ազատամարտիկներու բժշկական-ընկերային-տնտեսական-բնակարանային, ինչպէս նաեւ՝ անապաստան եւ անօթեւան ընտանիքներու ապրուստի էական կարիքներուն։ Անթոյլատրելի է անշուշտ, որ այդ գումարները յատկացուին այլ նպատակներու, պարզապէս ֆինանսաւորելու համար պետութիւնը։ ՀՅԴն ժողովուրդին կոչ ուղղեց անվերապահ մասնակցելու այդ հանգանակութեան։ Ուրախութեամբ նկատեցինք, որ աշխարհասփիւռ մեր մարմինները, միաւորները, ուղեկից միութիւնները (մանաւանդ ՀՕՄը), հաստատութիւններն ու համակիրները անվերապահօրէն կատարեցին իրենց «պարտք»ը եւ լայն բացին իրենց քսակները։*

*Այս բոլորը կատարուեցաւ հակառակ այն իրողութեան, որ Սեպտեմբերեան պատերազմին նախորդող մէկ տարուան ընթացքին այլ հանգանակային նպատակներու համար շարունակաբար դիմած էինք մեր ժողովուրդին՝ հասնելու համար Միջին Արեւելքի, եւ մասնաւորաբար Լիբանանի ու Սուրիոյ տագնապահար հայութեան բազմաթիւ կարիքներուն։*

*Ինչպէս արդէն անդրադարձայ, այսօր ալ կը շարունակուին հանգանակութեամբ գումարներ ապահովելու աշխատանքները։ Բնականաբար հիմա պիտի կեդրոնանանք Արցախի վերաբնակեցման ծրագիրներուն եւ Հայաստանի մէջ ապաստանած, թէ Արցախ վերադարձած անօթեւան ժողովուրդին ընկերատնտեսական կարիքներուն վրայ։*

ԴՐՕՇԱԿ.– Յայտնի է, որ պատերազմական օրերին, գործակցութեան նպատակով, շփումներ են եղել նաեւ Հայաստանի վարչապետի հետ։ Միւս կողմից այսօր Դաշնակցութիւնը պահանջում է Նիկոլ Փաշինեանի հրաժարականը։ Եթէ կարելի է անդրադարձէք եւ այս հարցերին։

*ՅՏԽ.– Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը միշտ ձգտած է կապ պահել երկրի բարձրագոյն ղեկավարին հետ, որպէսզի կարծիքներու ուղղակի փոխանակում ունենայ, կարողանայ առաջին աղբիւրէն տեղեկութիւններ ստանալ եւ միաժամանակ փոխանցել իր տեսակէտներն ու կեցուածքները։ Վարչապետի հետ երկար ժամանակէ ի վեր այդ հաղորդակցական կապը չկար, բայց պատերազմական օրերուն եւ անոր ճիշդ նախորդող շրջանին, մենք ունեցանք մի քանի հանդիպումներ, հիմնականին մէջ փոխանցելու համար մեր մտահոգութիւնները եւ լսելու պատերազմական զարգացումներու պաշտօնական վերլուծումը։ Պատերազմի ընթացքին փոխանցած էինք նաեւ, որ հակառակ մեր ունեցած հիմնական տարակարծութիւններուն, մենք պատրաստ ենք այլ հարցերը մէկ կողմ դնել եւ կեդրոնանալ հայ պետականութեան եւ բանակի օժանդակութեան խնդրին վրայ, Արցախի պատերազմին ապահովելու համար հայութեան յաղթանակը։ Վարչապետ Նիկոլ Փաշինեան մեր առաջին հանդիպումներուն փոխանցած էր իր գնահատանքը, որ Դաշնակցութիւնը առաջին օրէն մարդուժով մասնակցած էր պատերազմին եւ նաեւ համահայկական-համաշխարհային առումով քաղաքական, քարոզչական եւ հանգանակային աշխատանք կը տանէր, որպէսզի հայանպաստ ելք ունենայ պատերազմը։ Դժբախտաբար սակայն, այդ հանդիպումներու ընթացքին եւ անկէ դուրս՝ անկեղծ եւ ճշգրիտ տեղեկութիւններու փոխանցում չեղաւ իշխանութեան ներկայացուցիչներուն կողմէ, նոյնիսկ երբ այդ ներկայացուցիչները կ՛ընդունէին, թէ իրավիճակը շատ աւելի վատ էր քան հրապարակային պաշտօնական տուեալները։*

*Մենք ալ, անդրադառնալով հանդերձ որ պաշտօնական տեղեկութիւնները չէին համապատասխաներ իրական կացութեան, ընդունելով նաեւ որ պատերազմական իրավիճակ էր եւ ռազմական դրութիւն գոյութիւն ունէր եւ պարտաւոր էինք չհակասելու պետական-պաշտօնական տեղեկատուութեանց, մնացինք զուսպ. անշուշտ շատ ծանր կը կշռէր մեր խղճին վրայ այն հանգամանքը, որ հայկական կողմը ունէր բազմաթիւ զոհեր, մեծ թիւով վիրաւորներ եւ պատերազմի հայանպաստ ելք չէր ուրուագծուեր։ Բան մը, որ կը ժխտուէր իշխանութեան կողմէ եւ կ՛ըսուէր, որ մենք այլընտրանք չունինք՝ բացի պայքարելէ մինչեւ վերջ։*

*Պատերազմի ընթացքին ի յայտ եկան մեծ դժուարութիւններ՝ անկազմակերպ վիճակ, զօրակոչի անկանոն յայտարարութիւններ, քաղաքական անտեղի միջամտութիւններ եւ ռազմաճակատի վրայ լուրջ ձախողութիւններ։ Մեզի համար անընդունելի էր այն իրողութիւնը, որ ունէինք բարձրաստիճան փորձառու սպաներ, որոնք որքան ալ տարակարծիք ըլլային այս իշխանութեան կեցուածքներուն նկատմամբ, իրենց պատրաստակամութիւնը յայտնած էին օժանդակելու պատերազմի գործողութիւններուն եւ իրենց ունեցած հեղինակութիւնն ու կարողութիւնը տրամադրելու հայ բանակին։ Պատասխանը միշտ եղած էր նոյնը՝ կտրուկ մերժում։ Ամենայնդէպս, արդիւնքը արդէն յստակ է, տակաւին պատերազմի ընթացքի մասին շատ մութ կէտեր կան, որոնց ակնարկած էր նոյնիսկ ԱՀ նախագահը իր ուղերձին մէջ եւ որոնք վստահաբար պիտի բացայայտուին։*

*Այս բոլորը ստեղծեց ներազգային շատ վատ մթնոլորտ։ Պատերազմի աւարտէն ետք, երբ յստակացաւ ազգային աղէտին տարողութիւնը, մեզի համար բացայայտ դարձաւ, որ որեւէ ելք չկայ այս կացութենէն՝ բացի հող յանձնած եւ ծանր պարտութեան առաջնորդած Նիկոլ Փաշինեանի հրաժարականէն եւ այս իշխանութեան հեռացումէն։ Պարզ է, որ պարտուած ու պարպուած վարչապետը, ամէն ինչ յանձնելու տրամադրութեան մէջ գտնուող անձը, ազգը սուտերով ապակողմնորոշած ղեկավարը չի կրնար որեւէ հայանպաստ կեցուածք ապահովել միջազգային ուժերէն, կամ իսկապէս դիմադրել մեր թշնամիներուն՝ Թուրքիոյ, Ատրպէյճանի բոլոր նկրտումներուն. էական է վայրկեան առաջ փոխարինել զինք, որպէսզի ազգային գաղափարախօսութեան հիմքերով ամուր վարչապետ մը՝ շրջապատուած փորձառու եւ կարող ուժերով, ստեղծէ ատակ, ազգանուէր դէմքերով կառավարութիւն, ստանձնէ սանձը այս երկրին, կարողանայ յոյսը վերադարձնել մեր ժողովուրդին եւ ձեռք բերէ հայանպաստ արդիւնքներ չարաբաստիկ Յայտարարութեան անորոշ կէտերուն վերաբերեալ եւ ապագայ բանակցութիւններու ընթացքին։*

ԴՐՕՇԱԿ.– Ստեղծուած ծանր կացութեան մէջ ի՞նչ առաջնահերթ անելիքներ էք տեսնում Հայաստանի իշխանութիւնների, քաղաքական ուժերի եւ ընդհանրապէս մեր ժողովրդի համար։

*ՅՏԽ.– Անմիջականօրէն՝ Հայաստանի քաղաքական որեւէ իշխանութեան հիմնական անելիքը ստորագրուած Յայտարարութեան անորոշ բաժիններու առաւելագոյն հայանպաստ լուծումներ ապահովելու խնդիրն է. բան մը, որ դժբախտաբար կարելի չէ իրագործել այս իշխանութեան օրոք։ Քաղաքական ուժերը եւ մտաւորականութիւնը, որոնք համախմբուած են ՀՅԴի շուրջ, արդէն իսկ բացայայտած են իրենց կեցուածքը՝ ստեղծել Հայրենիքի փրկութեան ժամանակաւոր կառավարութիւն, որպէսզի ժողովուրդին մօտ վերազարթնի յոյսը, վերադառնայ ազգային գաղափարա-*



խօսութիւնը եւ պարտուողական, ընկճուած հոգեբանութենէն դուրս գայ ամբողջ ժողովուրդը։ Ապա՝ որոշ կայունութիւն եւ համերաշխութիւն հաստատուելէ ետք, դիմուի ժողովուրդին, որպէսզի իր կամքը արտայայտէ խորհրդարանական արտահերթ ընտրութիւններու միջոցաւ։

Մինչեւ այդ ընտրութիւնները, անհրաժեշտ է որ Հայրենիքի փրկութեան կառավարութիւնը աշխատի Հայաստանի տնտեսական անկումի կասեցման ուղղութեամբ, բնականոն պայմաններ ստեղծէ որպէսզի հնարաւորինս կասեցնէ հաւանական արտագաղթի հոսքը եւ իր կարեւոր նպաստը բերէ Արցախի վերականգնումին։ Իսկ այս նպատակներն անիրագործելի կը մնան, եթէ ներկայ իշխանութիւնը, իր վարչապետով, չհեռանայ իշխանութենէն։

ԴՐՕՇԱԿ.– 2021ը դիմաւորեցինք տագնապալի սպասումներով եւ անորոշութիւններով։ Անհոգ օրեր չեն սպասում մեզ։ Առաջին հերթին յիշենք արցախցիների առջեւ ծառացած հոգսերի ու մարտահրաւէրների մասին։ Այնուամենայնիւ ամեն նոր տարուա հետ միշտ կապւում են լաւատեսական յոյսեր ու ակնկալիքներ։ Ի՞նչ կը մաղթէինք մեր հայրենիքին, մեր ժողովրդին եւ մեր ընկերներին։

ՅՏԽ.– 2020ը աղէտալի տարի էր. չարունակական հարուածներու եւ տագնապներու տարի։ Կրկին յիշենք Լիբանանի մէջ հոկտեմբեր 2019էն սկսած անկումը, Սուրիոյ մէջ պատերազմական, տնտեսական եւ առողջապահական տագնապը, համաճարակի համաշխարհային աղէտը, Լիբանանի մէջ Պէյրութի նաւահանգիստին պայթիւնը եւ վերջ ի վերջոյ վերանկախացեալ մեր հայրենիքի նոր պատմութեան Արցախեան երկրորդ պատերազմի պարտութեան մեծագոյն աղէտը։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնն ալ, շատերու նման, ստիպուեցաւ վերանայիլ իր ծրագիրները, վերարժեւորել անոնցմէ մէկ քանիին առաջնահերթութիւնները եւ կեդրոնանալ այդ այլազան տագնապներու եւ աղէտներու բերումով հայ ժողովուրդին կրած վնասներուն եւ հայրենիքին ու հայութեան տրամադրելի օժանդակութեանց վրայ։ Միաժամանակ անշուշտ, չենք մոռնար այս յուսահատական մթնոլորտէն մեր ժողովուրդը դուրս բերելու անհրաժեշտութիւնը, որպէսզի անոր վերադառնայ իր առասպելական արիութեան ոգին։

Ուրեմն մեր հայրենիքին ու ժողովուրդին կը մաղթենք վճռակամութիւն՝ վանելու համար համատարած ընկճուածութիւնն ու պարտուողական հոգեբանութիւնը. իսկ մեր ընկերներէն կ՛ակնկալենք, որ մնան պինդ՝ վերանորոգ կորովով եւ անսակարկ նուիրումով կեդրոնանալու 2021ի հետեւեալ առաջնահերթութիւններուն վրան.

1. Հայաստանի եւ Արցախի մէջ քաղաքական բեկումնային փոփոխութիւն.

Փաշինեանի եւ իր վարչախումբի հեռացումը առաջին էական քայլն է։ Ազգային փրկութեան կառավարութեան հաստատումէն ետք պարտինք համախմբել հայրենի ու համահայկական ուժերը, միասնաբար դիմագրաւելու հայրենի մարտահրաւէրները՝ հաստատելու համերաշխութիւն եւ քաղաքական բնականոն գործընթացներ, վերադարձնելու ազգային գաղափարախօսութիւնը որպէս հիմնարար սկզբունք, ամրապնդելու ժողովրդավարութիւնը եւ օրէնքի գերակայութիւնը, կասեցնելու տնտեսական գահավիժումը, ապահովելու բոլոր հայ գերիներու վերադարձը, յաւերժացնելու Արցախի պատերազմի նահատակներուն յիշատակը եւ հասնելու անոնց ու վիրաւոր զինուորներու եւ կամաւոր ազատամարտիկներու ընտանիքներու կարիքներուն, հզօրացնելու հայոց բանակը, վերահաստատելու Արցախի կարգավիճակի շուրջ բանակցութիւնները, բարելաւելու Հայաստան-Ռուսիա եւ Հայաստան-Իրան յարաբերութիւնները եւ վերադարձնելու բանականութիւնը քաղաքական փոխյարաբերութեանց մէջ։

2. Արցախի վերականգնում.

Դաշնակցութեան համար Արցախի նորօրեայ կորուստները մնայուն չեն. հրադադար հաստատուած է, բայց պատերազմը չէ աւարտած. պիտի գայ պահը վերականգնելու Արցախի իրաւունքներն ու ամբողջական սահմանները։ Մինչ այդ՝ անհրաժեշտ է հրադադարի պայմանները բարելաւել, վերակառուցել քաղաքներն ու գիւղերը, Արցախահայութեան համար ապահովել ԱՀ վերադարձի բարենպաստ պայմաններ, հասնիլ անօթեւան ընտանիքներու կարիքներուն, զարգացնել տնտեսութիւնը, իսկ համաշխարհային մակարդակի վրայ շեշտել Արցախի բացարձակ ինքնորոշման իրաւունքը եւ աշխատիլ վերականգնելու Մինսկի խումբի համանախագահութեան ներքոյ բանակցային գործընթացը։

3. Սփիւռքի վերաշխուժացում.

Սփիւռքն ալ պարտինք դուրս բերել Արցախեան կորուստի յարուցած ահաւոր ցնցումէն։ Եւ անոր վերադարձնել հաւատը հայրենիքի եւ հայութեան պայծառ ապագային նկատմամբ։ Կը յուսամ որ կը կարողանանք 2021ին իրականացնել նաեւ Սփիւռքի հարցերու խորհրդաժողովը՝ արտերկրի հայութեան նոր աւիշ հայթայթելու եւ համահայկական առաջնահերթութիւնները ճշդելու համար։

Մենք բոլորս, որպէս մէկ ու ամբողջական հայութիւն, պէտք է սթափօրէն գնահատենք, թէ կը գտնուինք միանգամայն նոր կացութեան առաջ։ Այդ կը պահանջէ նոր ծրագրումներ եւ, ի հարկէ, բազմապատկուած ջանքեր՝ տասնամեակներու փոթորկալի ճամբայ կտրած, սակայն մեծ ալեկոծութեան պատճառաւ ետ շպրտուած մեր ազգային նաւուն ընթացքը կրկին ուղղորդելու համար դէպի ազգային մեծ նպատակներու հասցնող հանգրուաններ։ Արդ՝ բոլորս պարտինք աշխատիլ վերահաստատելու հայութեան միասնականութիւնը, վերականգնելու այն հաւատն ու ոգին, որոնք երկար դարերու եւ փորձութիւններու ընդմէջէն ապահոված են ազգային մեր դժուար երթը։ Մենք պարտաւոր ենք կատարելու հետեւութիւններ մեր ոչ հեռաւոր անցեալի սխալներէն ու բացթողումներէն եւ մեջքերնիս շտկած, միտքերնիս պարզած առաջ շարժելու, կողմնորոշուելով միայն մեր ազգային գերագոյն շահերով ու ազգային իտէալներով։




























### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

«Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը ցաւակցութիւն կը յայտնէն «Հորիզոն»ի բարեկամ եւ զօրակից՝ տիկ. Շաքէ Կէօնճեանին եւ զաւակներուն՝ Զաւէնին, Նորայրին եւ նաեւ Պէնօհանեան ընտանիքի բոլոր անդամներուն, իրենց մօր, մեծ մօր եւ հարազատին՝ ողբ. **ՌՕԶԱ ՄԻՆԱՍԵԱՆ ՊԷՆՕՀԱՆԵԱՆ**ի մահուան տխուր առթիւ:

### ԲԱՐԻ ԱՊԱՔԻՆՈՒՄ

ՀՅԴ «Միհրան Փափազեան» կոմիտէն բարի ապաքինում կը մաղթէ ընկ. **ՎԱՀԷ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ**ին եւ ընկհ. **ՎԱՆՈՒՀԻ ԻՍԱՋԱՆԵԱՆ**ին:


**Ունկնդրեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիոժամերը՝**

**ՎԱՆԳՈՒՎԸՐ**- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM
Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00

**ԹՈՐՈՆԹՕ**- «Կիլիկիոյ Ձայն» CHTO AM 1690
Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00

**ՄՈՆԹՐԷԱԼ**- «Հայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM
Երկուշաբթի երեկոները՝ ժամը 9:30-12:00
Շաբաթ առաւօտները ժամը՝ 7:30-9:30
Կիրակի առաւօտները ժամը 7:00-8:00
«Վանայ Ձայն» 1450 AM
Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00

**ՀԱՄԻԼԹԸՆ**- «Հայ Կեդրոնի» ռատիոժամ CFMU 93.3 FM
Կիրակի առաւօտեան 10:00-11:00
cfmu.mcmaster.ca


## Մ Ա Հ Ա Զ Դ

Տոքթ. եւ Տիկ. Անդրանիկ Պէնօհանեան, դուստր՝ Նաթալի
Տիկ. Շաքէ Կէօնճեան, զւկ.՝ Զաւէն
Տ եւ Տ Արամ, Մարի Պէնօհանեան, զւկ.՝ Լեւոն
Տ եւ Տ Արման, Լուսի Պէնօհանեան, զւկք.՝ Վարդան, Սարին
Տ եւ Տ Վահէ, Մարի Ալին Պէնօհանեան, զւկք.՝ Նորայր, Ժիրայր
Տ եւ Տ Դրօ, Գարէն Պէնօհանեան, զւկք.՝ Սթէֆանի, Ճէնիֆըր
Նորա Կէօնճեան, Մուրատ Թէք
Տ եւ Տ Զարեհ, Մարալ Մկրտիչեան, զւկք.՝ Կարէն, Կասիա
Տ եւ Տ Ժան-Փիէր, Դալար Հալէպեան, դուստր՝ Ալիք
Տիար Ալէքս Մինասեան

Նաեւ համայն Մինասեան, Թօփալեան, Մազինճի, Մարգարեան, Քէօլէեան, Կէօնճեան, Գարագաշեան, Երզնկացեան, Քէհեայեան, Սումպուլեան, Մկրտիչեան, Հալէպեան եւ Թէք ընտանիքներ

Խոր ցաւով կը գուժեն մահը
Իրենց մօր, մեծ մօր, մեծ մեծ մօր, քրոջ եւ հարազատին



**ՌՕԶԱ ՎԱՐԴՈՒՀԻ**
**ՄԻՆԱՍԵԱՆ ՊԷՆՕՀԱՆԵԱՆԻ**
(Ծնած 1923-ին, ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ)
մահը, որ պատահեցաւ
Կիրակի, 31 Յունուար 2021-ին

40-Ի ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
Կիրակի, 14 Մարտ 2021,
Յաւարտ Ս. Պատարագի
Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցի
Ըստ օրուան օրէնքին

Ընտանիքին փափաքով, փոխան ծաղկեպսակի ձեր նուիրատուութիւնները կրնաք կատարել եկեղեցւոյ՝ կապուելով 514 331 5445 #202 թիւին:


**RITA BAGHDASSARIAN**
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager
COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER_FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REEÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT
3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

VIZUALIS
optométriste
DR SHANT DONABEDIAN
Centre d'Achat Fairview · Fairview Mall
Pointe Claire
514 695 2555 · VIZUALIS.CA


Danièle Papazian, MSc.
Courtier immobilier
C 514.234.6799
dpapazian@remax-quebec.com
www.remaxducartier.com
RE/MAX DU CARTIER
1290, rue Bernard Ouest, bureau 100
Outremont Qc H2V 1V9
T 514.271.2131

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers
Ապահովագրական գրասենեակ
KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN
970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7
T: 514.903.3999

Patisserie
MAHROUSÉ
FONDÉE EN 1970
9705 Boulevard de l'Acadie, Montréal, QC H4N 2W2
Tél: 514.279.1629 • info@mahrouse.ca • www.mahrouse.ca

1988
30 ans d'excellence!
CARROSSERIE
JACOB & JACOB
BODY SHOP
CAS D'ASSURANCES
6280 St. Jacques, Montréal, Québec, H4B 1T6
Tél: (514) 484 - 7945 Fax: (514) 484 - 2487
jacobautobody@bellnet.ca www.carrosseriejacobetjacob.ca


RE/MAX
RE/MAX 3000 inc.
Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker
C 514.519.3543
B 514.333.3000

FIVE STAR
ELECTRIQUE
CINQ ÉTOILES
SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL
BEDROS NALPATIAN
442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.
Pharmaciens-propriétaires
3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1
T 450 688-4111
F 450 681-5525
Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h
Infirmière (jeudi) : 8h30 à 15h
LIVRAISON GRATUITE
membre affilié à Proxim



**horiZon**
**HORIZON**
**Hebdomadaire arménien**
**Armenian Weekly**
Publié par / Published by
**Les Publications Arméniennes (1991)**
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

**Abonnement annuel / Yearly subscription**
**Canada**
2e classe - 2nd class: $80
plus applicable taxes
1re classe - 1st class: $95
**États-Unis / USA**
1re classe - 1st class: $95 US
**Ailleurs / Elsewhere**
1re classe - 1st class: $125 US

**Administration / Publicité**
Sylva Ehramdjian-Bachekjian
**(General Manager)**
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail:sylva@horizonweekly.ca
Courrier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

**Վարիչ Խմբագիր՝**
Վահագն Գարագաշեան
**Վարչական պատասխանատու՝**
Սիլվա Պաշըգճեան
**Քարտուղար՝** Մարինա
Տէր Խաչատուրեան
**Աւագ խմբագիր՝**
Վրէժ-Արմէն Արթինեան
**Անգլերէն/Ֆրանսերէն՝** Վիգէն Աբրահամեան, Թինա Սիլահեան
**Ձեւաւորում եւ Սրբագրիչ՝**
Քրիստափոր Միքայէլեան

**Թորոնթոյի Ներկայացուցիչներ՝**
Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921
Ժագ Վարպետեան, (416) 722-9225

**Լուսանկարիչներ՝** Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիրմէնքաշ



Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada
Canada


MARCHÉ
ADONIS
Un univers de fraîcheur
Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu- DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga
www.groupeadonis.ca /
You Tube




Horizon, 3401, Olivar-Asselin, Montréal, Québec Canada H4J 1L5 Courrier de deuxième classe /No. 40065294 / Second class mail